



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«12» 07 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000055

Ձեռնարկողը՝

«ՆԱՐԻՊՐՈՑ» ՍՊԸ  
Ք. Երևան, Շինարարների 13, բն. 9

Գործունեությունը՝

Նոնաձորի պղինձ-ոսկեբեր հանքերևակման փարածքում  
2019-2021թթ. երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ  
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



*(Handwritten signature)*

Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000055

' 12 ' 07 2019թ.

**Սյունիքի մարզի Նոնաձորի պղինձ-ոսկեբեր հանքերևակման տարածքում  
2019-2021թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների  
կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝ <<Նարիպրոֆ>> ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ>> Գ կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ

Սույն ծրագիրը կազմվել է «Նարիպրոֆ» ՍՊԸ կողմից 2016-2019թթ.-ին Նոնաձորի հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շարունակման նպատակով: Ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման հիմնական նպատակն է մակերևույթում եզրագծված հեռանկարային տեղամասերի և ըստ խորության հանքայնացման կապակցումը, դրանց հետապնդումն ըստ տարածման և խորության: Աշխատանքները կատարվելու են առավել հեռանկարային առանձնացված տարածքում էլեկտրահետախուզական և մագնիսահետախուզական մեթոդներով:

Ըստ 2016-2019թթ.-ին կատարված աշխատանքների ստացվել են մետաղների պարունակությամբ բազմաթիվ հանքային հատույթներ, որոնց կապակցումը որպես առանձին հանքային մարմիններ միանշանակ չի, առկա են 2-3 տարբերակներ: Սկառնային մարմիններում արձանագրվել է մետաղների անոմալ պարունակություններ, իսկ լիթոքիմիական ցրոնների ուսումնասիրության արդյունքները ստուգման և ըստ խորության հանքային մարմինների ուրվագծման կարիք ունեն: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հատկացված 101.89հա տարածքում առանձնացվել է մոտ 51.0հա առավել հեռանկարային հատված, որտեղ և ծրագրավորվում է 2019-2021թթ. ի հետախուզական աշխատանքների իրականացումը: Համաձայն նախատեսվող ծրագրի իրականացվելու է Նոնաձորի պղինձ-ոսկեբեր երևակման հանքային մարմինների կապակցում երկրաֆիզիկական մեթոդների կիրառմամբ, հանքային մարմինների տեղադիրքի, անկման և տարածման պարամետրերի ճշտում, ստացված տվյալների կիրառմամբ հանքաքարի և մետաղների պաշարների նախնական գնահատում և երկրաբանական հաշվետվության կազմում:



Վարչական առումով ուսումնասիրվող տեղամասը տեղակայված է Սյունիքի մարզի Կապանի և Մեղրիի տարածաշրջանների սահմանին՝ Մեղրու լեռնաշղթայի հարավային մասում: Տեղամասի տարածքի մակերեսը կազմում է 51.0հա, իսկ ծայրակետերի կոորդինատները հետևյալն են.

Ը/Ը	ԵՀԹ29/219 թույլտվության կոորդինատներ		Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների երկարաձգման նպատակով հայցվող տարածքի կոորդինատներ /51. 0հա/	
	X	Y	X	Y
1.	4315178	8622184	4314944	8622583
2.	4315100	8623397	4314968	8623390
3.	4314299	8623397	4314318	8623383
4.	4314299	8622184	4314318	8622583

Հանքերակումը տեղակայված է Նոնաձոր գյուղից մոտ 5կմ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք, Շվանիձոր գյուղից մոտ 4.5կմ դեպի հյուսիս-արևելք, Մասրիկ և Շավգիր գետերի ջրբաժանային լեռնաշղթայի լանջերին: Լեռնագրական տեսակետից աշխատանքների կատարման տեղամասը իրենից ներկայացնում է հարաբերական բարձրությունների կտրուկ անկումներով, գետերի բազմաթիվ ձորակներով և սառցադաշտային լանդշաֆտներով տարածք: Շրջանի գլխավոր լեռնագրական միավորը համարվում է Մեղրու լեռնաշղթան, իսկ կառուցվածքային միավորը Մեղրու պլուտոնը:

Մինչև մոտակա ասֆալտապատ ավտոճանապարհը 3.5կմ է, որի պատճառով տեղամասում դաշտային աշխատանքները շատ դժվարությամբ են իրականացվել, հիմնականում օգտագործվել է ձիատրանսպորտ, ինչպես նաև ջրի խսպառ բացակայությունը, նույնիսկ հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին՝ մեծ խնդիրներ է առաջացրել, դեպի ճամբար ջուրն ու սնունդը տեղափոխվել է ձիերով:

Տեղամասից ոչ շատ մեծ հեռավորության վրա են գտնվում են Կապանի (32.0կմ դեպի հյուսիս-արևմուտք), Շահումյանի (29.0կմ դեպի հյուսիս), Թունդիրգետի (32.0կմ դեպի հարավ-արևելք) և Լիճքվազ-Թեյի (19.5կմ դեպի հյուսիս-արևմուտք) հանքավայրերը:

2019-2021թթ.-ին ծրագրավորվող աշխատանքների մեթոդաբանությունը հիմնված է նախկինում կատարված հետախուզության ժամանակ երկրաֆիզիկական մեթոդների կիրառման դրական արդյունքների վրա: Առավել հեռանկարային առանձնացված մակերեսով տարածքի վրա կատարվելու է էլեկտրապրոֆիլացում՝ դիմադրության միջին գրադիենտի և հարուցված բևեռացման (ՄԳ և ՀԲ) պրոֆիլացման մեթոդներով և մագնիսահետախուզություն:

Ըստ նախկինում կատարված աշխատանքների՝ տեղամասում առկա է մագնիսական հատկություններով օժտված ապարների բլուկ, որտեղ ուրվագծվել է հյուսիս-արևմտյան ուղղությամբ մինչև 100.0-120.0մ լայնությամբ, մի քանի հարյուր մետր երկարությամբ ձգվող գոտի: Տեղամասի կենտրոնական մասում նշվում է 1500-3000 հՄր ամպլիտուդայով դրական մագնիսական անոմալիա, որն առաջացել է մագնիսական ապարների զանգվածի վրա:

Հաշվի առնելով այն փաստը, որ հիմնական տեկտոնական խախտումները նույնպես ունեն հյուսիս-արևմտյան տարածում, առկա երկրաբանական տվյալներով ենթադրվում է, որ բևեռացման անոմալիան կապված է հանքայնացման գոտիների հետ, որոնք առաջացել են հիմնական տեկտոնական խախտումների երկայնքով և հնարավոր սկառնոլիտների մարմիններով:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է կատարել դաշտային մագնիսահետախուզություն՝ դյուրակիր մագնիսամետրերով: Մագնիսական



ուսումնասիրությունները կատարվելու են պրոֆիլային եղանակով, ինչը թույլ կտա դիտարկել մագնիսական դաշտի անոմալիաների ընդհանուր օրինաչափություններն, ինչպես նաև հստակեցնել մագնիսական հատկություններով օժտված մետաղական օգտակար հանածոների մարմինների տեղադրման պայմանները, խորությունն ու ձևաբանությունը: Պիկետների միջև նախատեսվում է 20.0մ հեռավորություն, առանձին հատվածներում հնարավոր է ցանցի խտացում մինչև 10.0մ: Յուրաքանչյուր պրոֆիլի սկիզբում և վերջում նախատեսվում է գործիքային կապակցում: Մագնիսահետախուզական աշխատանքների որակի հսկման նպատակով իրականացվելու է անկախ վերստուգիչ դիտարկումներ, որոնց քանակը կսահմանվի դիտարկումների ընդհանուր թվի 5%-ը: Մագնիսահետախուզական աշխատանքների փուլի ավարտին կառուցվելու են գեոմագնիսական դաշտի անոմալ նշանակությունների, բացարձակ և հարաբերական անոմալիաների գրաֆիկներ, քարտեզներ: Դրանց հորիզոնական մասշտաբները համապատասխանեցնելով հանույթի մասշտաբին:

Էլեկտրահետախուզական աշխատանքները կատարվելու են հարուցված բևեռացման մեթոդով, միջին գրադիենտի եղանակով: Սնուցող գծի տարածական երկարությունը կազմելու է մոտ 800.0մ: Ավելի մեծ չափի սնուցող գծի կիրառումը սահմանափակվում է խիստ կտրտված ռելիեֆային պայմաններով և օգտակար ազդանշանի էական թուլացմամբ: Էլեկտրահետախուզական աշխատանքները նախընտրված ցանցով իրականացնելու համար նախապես կատարվելու է դիտարկման պրոֆիլների նախապատրաստում չափալարով՝ համալիր նշածողեր դնելով: Հարուցված բևեռացման մեթոդով էլեկտրահետախուզության արդյունքները ներկայացվելու են թվացող բևեռացման դեկորների ձևով պրոֆիլների հատակագծի վրա: Անոմալիաների առանձնացման հիմնական չափանիշ է ծառայելու դեկորացիաները նորմալ ֆոնից:

Մագնիսաչափական և էլեկտրահետախուզության պրոֆիլները տարվելու են 50.0մ հեռավորությամբ՝ նախկին 100.0մ քայլով ցանցը խտացնելու նպատակով: Տարածքը մագնիսա-էլեկտրաչափական հանույթով ծածկելու համար կպահանջվի 18 պրոֆիլ:

Ըստ երկրաֆիզիկական ուսումնասիրության արդյունքների, որպես երկրաֆիզիկական անոմալիա առանձնացված և որպես հանքային մարմին դիտարկված տարածքներից նախատեսվում է 7 տեխնոլոգիական նմուշառում, յուրաքանչյուրը՝ առավելագույն 30.0մ<sup>3</sup> ծավալով: Նմուշարկումը կկատարվի բնական մերկացումներից և սկառնային մարմիրներից՝ առանց հողերի խախտման: Տեխնոլոգիական նմուշները հետազոտության կենթարկվեն լաբորատոր և կիսաարդյունաբերական պայմաններում՝ մետաղների կորզման տեխնոլոգիան ուսումնասիրելու նպատակով: Վերցված նմուշներով կկատարվեն նաև միներալոգիական ուսումնասիրություններ:

Աշխատանոցային աշխատանքների ժամանակ կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացում և համակարգում, երկրաբանական հաշվետվության կազմում՝ համապատասխան քարտեզներով, հատակագծերով և կտրվածքներով:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաֆիզիկական մեթոդներով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությամբ անցկացման տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Եթե աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն առաջանա հատել գետակներ, ապա նախապես երթուղիները ծրագրավորվելու են այնպես, որ ճանապարհին առկա լինեն կամրջակներ: Դրանց բացակայության դեպքում անցման համար ընտրվելու են գետակների ստոր հատվածները, ջրային միմիմալ հոսքով: Չի նախատեսում ազդեցություն շրջակա տարածքի հողային ծածկույթի վրա, քանի որ տեխնոլոգիական նմուշարկման ընթացքում նմուշները վերցվելու են սկառնացված զոնաներից կամ բնական մերկացումներից: Մեքենաների տեղաշարժման հետևանքով հողերի խտացում, պնդացում չի կատարվելու,

քանի որ տեղափոխությունը կատարվելու է միայն գոյություն ունեցող գրունտային ճանապարհներով, իսկ ավտոճանապարհներից դուրս կիրառվելու է ձիատրանսպորտ: Իրականացվող աշխատանքների ընթացքում աղմուկի առաջացման նորմատիվային չափի գերազանցում չի ենթադրում: Հնարավոր աղմուկը կապված է ավտոմեքենայի աշխատանքի հետ, իսկ թրթռումը բացառվում է, քանի որ ծանր տեխնիկայի կիրառում չի նախատեսվում: Ծրագրավորվող երկրաֆիզիկական աշխատանքների մեթոդիկական չի նախատեսվում հողային ռեսուրսների խախտում:

Նոնաձորի երևակման տարածքը հարակից է Զանգեզուրի կենսոլորտային համալիրի մաս կազմող «Արևիկ» ազգային պարկին:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

1. Աշխատանքի ընթացքում առաջացող կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ (առավելագույնը 35.0լ տարողությամբ), աշխատանքների ընթացքում աղբի տեղափոխում ընկերության սեփական ավտոտրանսպորտով դեպի Մեղրի քաղաքի աղբամանները:

2. Ավտոտրանսպորտի շահագործում միայն սարքին վիճակում :

3. Ավտոտրանսպորտի վառելիքի ծախսի և վնասակար գազերի արտանետումների մակարդակի պարբերական ստուգում:

4. Երկրաֆիզիկական պրոֆիլների համար նախատեսված տարածքի դիտարկում՝ կենդանիների բների, որջերի հայտնաբերման նպատակով: Եթե այդպիսիներ կդիտարկվեն, ապա պրոֆիլների տեղադրվածությունը կփոփոխվի:

5. Քանի որ երկրաֆիզիկական աշխատանքների ընթացքում ազդեցություն հնարավոր է դրսևորվի միայն մթնոլորտային օդի վրա ավտոտրանսպորտի տեղաշարժման արդյունքում, ապա ընկերությունը պարտավորվում է տարեկան երկու անգամ իրականանել աշխատանքների ընթացքում օգտագործվող ավտոտրանսպորտի տեխնիկական վիճակի զննումներ: Այս միջոցառումը թույլ կտա ապահովել արտանետումների թույլատրելի քանակությունները, ինչպես նաև բացառել կենդանական աշխարհի համար անհանգստության պատճառ հանդիսացող աղմուկի մակարդակը:

6. Երկրաբանական ուսումնասիրություն իրականացնող անձնակազմի համար կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության, 25.06.2019թ. Մեղրիի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների, ինչպես նաև փորձաքննական գործընթացում կատարված լրամշակումների, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող երկրաբանական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային: Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից: Նախատեսվող գործունեության ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման,

թրթռացման և աղմուկի հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացել բացառապես հայցվող տարածքին համապատասխան՝ բացառելով <<Արևիկ>> ազգային պարկի տարածքում որևէ աշխատանքի իրականացում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. «Կովկասի տարածաշրջանում Հայաստանում պահպանվող տարածքների աջակցության» ծրագրի շրջանակներում ներկայումս իրականացվող <<Արևիկ>> ազգային պարկի սահմանների ճշտման աշխատանքների արդյունքում, երկրաբանական ուսումնասիրության համար առանձնացված տարածքները ազգային պարկի տարածքի հետ համընկնելու դեպքում, բացառել համընկնող տարածքներում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Նարիպրոֆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի <<Նոնաձորի պղինձ-ոսկեբեր հանքերևակման տարածքում 2019-2021թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման>> նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան